

ՎԱՆԱՁՈՐԻ ՀՈՎՀ. ԹՈՒՄԱՆՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ  
ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ

ՎՊՀ ՌԵԿՏՈՐ

ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ

Գ.Կ. ԽԱԶԱՏՐՅԱՆ

<<\_\_\_\_>> \_\_\_\_\_ 2015թ.

ՈՐԱԿԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ  
ԿԱՆՈՆԱԿԱՐԳ

Ընդունված է գիտական խորհրդի նիստում

Արձանագրություն թիվ 2

<<27>> \_\_\_\_\_02\_\_\_\_\_ 2015թ.

Սույն կանոնակարգը սահմանում է “Վանաձորի Հովի. Թումանյանի անվան պետական Համալսարան” պետական ոչ առևտրային կազմակերպության (այսուհետ՝ Համալսարան) որակի կառավարման համակարգի ներդրման նպատակը, խնդիրներն ու գործառույթները, որակի կառավարման սխեման, չափորոշիչները և փաստաթղթերը: Համալսարանի որակի կառավարման համակարգի ստեղծման իրավական և նորմատիվային հիմք են հանդիսանում ՀՀ գործող օրենսդրությունը, կրթության ոլորտում նորմատիվ կարգավորող փաստաթղթերը, Համալսարանի կանոնադրությունը, հայեցակարգը և ռազմավարական պլանը:

## **1. Հիմնական դրույթներ**

1.1. Որակի կառավարումը Համալսարանի կրթության որակի ապահովման կենտրոնի աշխատանքային ուղղվածություններից մեկն է:

1.2. Համալսարանի որակի կառավարման գործընթացները կազմակերպվում են ՀՀ գործող օրենսդրության, կրթության ոլորտի օրենսդրական և նորմատիվային փաստաթղթերի, Համալսարանի և որակի ապահովման կենտրոնի հայեցակարգի դրույթներին համապատասխան:

1.3. Համալսարանի որակի կառավարման գործառույթներն իրականացվում են Համալսարանի ֆակուլտետների, ամբիոնների, գիտական և մասնագիտական կաբինետների հետ համագործակցությամբ:

1.4. Որակի կառավարման համակարգը հնարավորություն է ստեղծում դիտարկելու Համալսարանի որակի կառավարման համակարգի ներկա վիճակը և կարգավորելու նրա բարելավումը միտված գործողությունները, պարզաբանելու խոչընդոտների հաղթահարման ուղիները, նաև հաշվի առնելու Համալսարանի հետագա զարգացմանը ուղղված նախաձեռնություններն ու մտադրությունները:

## **2. Որակի կառավարման համակարգի նպատակը, խնդիրներն ու գործառույթները**

### **2.1. Որակի կառավարման համակարգի նպատակն է՝**

պարբերաբար վերլուծությունների միջոցով որակի տեսանկյունից ուսումնասիրել Համալսարանի կառավարման համակարգը:

## **2.2. Որակի կառավարման համակարգի հիմնական խնդիրներն ու գործառնությունները.**

- 2.2.1. մշակել և իրականացնել Համալսարանի քաղաքականությունը որակի կառավարման բնագավառում և վերահսկել այդ քաղաքականության իրականացման գործընթացը տարբեր ստորաբաժանումներում,
- 2.2.2 պարբերաբար ստուգել և վերլուծության ենթարկել Համալսարանի կառուցվածքային ստորաբաժանումների կողմից որակի բարելավմանը միտված գործընթացների արդյունքները,
- 2.2.3. նպաստել Համալսարանի ինքնագնահատման գործընթացին,
- 2.2.4. անցկացնել ուսումնական գործընթացի տեղեկատվական, նյութատեխնիկական, կադրային, ուսումնամեթոդական ոլորտի ուսումնասիրություններ,
- 2.2.5. աջակցել որակի կառավարման համակարգի մշակման, ներդրման և ուղղորդման գործընթացին՝ համաձայն ընդունված միջազգային չափորոշիչների (ISO 9000-2001, ISO 9001-2001, ISO 9004-2001)
- 2.2.6. կատարել Համալսարանի որակի կառավարման համակարգի առկա վիճակի վերլուծություն,
- 2.2.7. վերահսկել կառավարման համակարգի թափանցիկությունն ու հաշվետվողականությունն ապահովող գործընթացները,
- 2.2.8. մշակել որակի կառավարման գործընթացում դասախոսներին, ուսանողներին և գործատուներին ներգրավելու մեխանիզմներ,
- 2.2.9. համակարգել Համալսարանի կառուցվածքային ստորաբաժանումներում որակի կառավարման մեթոդների ներդրման աշխատանքները,
- 2.2.10. մշակել որակի ներքին աուդիտի անցկացման փաստաթղթերը,
- 2.2.11. իրականացնել Համալսարանի և նրա կառուցվածքային ստորաբաժանումների որակի ներքին աուդիտ և ինքնագնահատում,
- 2.2.12. վերապատրաստել Համալսարանի պրոֆեսորադասախոսական և վարչական անձնակազմին՝ Համալսարանի որակի կառավարման վերաբերյալ իրազեկվածության մակարդակի բարձրացման և որակի մշակույթի զարգացման նպատակով,
- 2.2.13. ապահովել հետադարձ կապի մեխանիզմները այլ բուհերի, կազմակերպությունների և արդյունաբերական հիմնարկների հետ՝ բուհի որակի կառավարման համակարգի բարելավման նպատակով,

- 2.2.14. ապահովել հետադարձ կապի մեխանիզմներ բուհի ստորաբաժանումների և որակի կառավարման համակարգի բարելավման նպատակով,
- 2.2.15. մշակել համապատասխան մեխանիզմներ՝ ուղղված տեղեկատվական և նյութատեխնիկական վերահսկողության ապահովմանը,
- 2.2.16. նպաստել ուսումնական գործընթացի ուսումնամեթոդական, տեղեկատվական և նյութատեխնիկական միջոցների որակի գնահատման չափանիշերի մշակմանը,
- 2.2.17. աջակցել որակի կառավարման համակարգի տեղեկատվական մոդելի մշակմանը և ներդրմանը,
- 2.2.18. նպաստել Համալսարանի կառուցվածքային ստորաբաժանումներում որակի կառավարման մեթոդների ներդրման և խորհրդատվական աշխատանքների իրականացմանը,
- 2.2.19. կազմակերպել որակի կառավարման համակարգի անհրաժեշտ տեղեկատվության հավաքագրումը (պետական կրթական չափորոշիչներին համապատասխան մասնագիտական ծրագրեր, օրինակելի ուսումնական պլաններ, աշխատանքային, ուսումնական պլաններ և ծրագրեր, հարցաթերթեր և այլն):

### **3. Որակի կառավարման սխեմա (տես՝ հավելված)**

- 3.1. Ղեկավարման հորիզոնական մակարդակում ընդգրկված են գիտխորհուրդը, ռեկտորը, ովքեր իրականացնում են բուհի *օպերատիվ* կառավարումը, այն է՝ հրատապ խնդիրների լուծում, ՀՀ Կրթության և գիտության նախարարության կարգադրությունների և հրամանների կատարում, արտակարգ իրավիճակների ընթացքում որոշումների ընդունում, բախումային իրավիճակների պարզաբանում և այլն):
- 3.2. Վերահսկման հորիզոնական մակարդակում ներգրավված է անձնակազմի ավելի լայն շրջանակ (պրոռեկտորներ, ուսումնական վարչություն, պրոֆեսորադասախոսական կազմ, վարչական և տեխնիկական աշխատողներ, ուսանողներ, գործատուներ), ովքեր լուծում են *հեռանկարային* ռազմավարական խնդիրներ, այն է՝ արտաքին միջավայրի փոփոխություններին հարմարվելը, աշխատաշուկայի վերլուծությունը և կանխատեսումը, նորարարությունների ներմուծումը, միասնական եվրոպական կրթական միջավայրին ինտեգրման քաղաքականությունը, Բոլոնյան գործընթացի պահանջների ներդրումը,

զարգացման ռազմավարությունը, PR-գործունեությունը, կապերը հասարակայնության հետ, կրթական գործընթացի որակի կառավարումը և այլն:

3.3. Գործընթացային հորիզոնական մակարդակում ներգրավված են ֆակուլտետները, ամբիոնները (դասախոսներ, ուսանողներ, վարչական աշխատողներ), որոնք գործում են համաձայն իրենց աշխատանքային պայմանագրի գործառույթների:

#### **4. Որակի կառավարման չափորոշիչները**

##### **4.1. Առաքելություն և նպատակներ**

4.1.1. Բուհի նպատակները և խնդիրները արտացոլող առաքելությունը համապատասխանում է որակավորումների ազգային շրջանակին:

4.1.2. Բուհի առաքելությունն արտացոլում է ներքին և արտաքին շահակիցների կարիքները:

4.1.3. Հաստատության ներքին շահակիցները մասնակցում և աջակցում են բուհի առաքելության իրականացմանը:

4.1.4. Բուհում գործում են առաքելության և նպատակների իրականացման արդյունքների գնահատման պաշտոնապես սահմանված մեխանիզմներ և ընթացակարգեր:

##### **4. 2. Կառավարում և վարչարարություն**

4.2.1. Բուհի կառավարման համակարգը, վարչական կառույցները և դրանց գործառականությունն արդյունավետ են և միտված հաստատության առաքելության ու նպատակների իրականացմանը:

4.2.2 Բուհի դասավանդողները և ուսումնառողները հնարավորություն ունեն մասնակցելու իրենց վրա ուղղակիորեն կամ անուղղակիորեն ազդեցություն ունեցող կառավարման մարմնի որոշումների կայացման գործընթացներին:

4.2.3. Բուհի առաքելությանն ու նպատակներին համապատասխան իրականացվում է հաստատության գործողությունների կարճաժամկետ, միջնաժամկետ և երկարաժամկետ պլանավորում:

4.2.4. Բուհն իրականացնում է սեփական գործունեության վրա ազդող գործոնների ուսումնասիրություն՝ արդյունավետության գնահատման նպատակով:

##### **4. 3. Որակի ներքին ապահովման համակարգ**

4.3.1. Որակի ներքին ապահովման գործընթացների կառավարման նպատակով բուհը տրամադրում է մարդկային, նյութական և ֆինանսական ռեսուրսներ:

4.3.2. Բուհն ունի իրականացվող մասնագիտական կրթական ծրագրերի և շնորհվող որակավորումների որակի ու չափորոշիչների պահանջների ապահովման քաղաքականություն և ընթացակարգ: Յուրաքանչյուր մասնագիտական կրթական ծրագրի ռազմավարությունը և նպատակները պաշտոնապես հաստատված են և հանրությանը հասանելի: Որակի ապահովման գործընթացներում կարևորվում է ուսումնառողների և շահակիցների դերը:

4.3.3. Բուհում գործում են կրթական ծրագրերի մշակման, հաստատման, որակի գնահատման, մշտադիտարկման և դրանց պարբերաբար վերանայման գործընթացների գնահատման հաստատված մեխանիզմներ:

4.3.4. Բուհում գործում են ուսումնառողների գնահատման համակարգի արդյունավետությունը չափող մեխանիզմներ:

4.3.5. Բուհում գործում են պրոֆեսորադասախոսական կազմի մասնագիտական որակների արդյունավետության գնահատման մեխանիզմներ: Այդ մեխանիզմները հասանելի են արտաքին գնահատում իրականացնողներին:

4.3.6. Բուհում գործում են ուսումնառողներին և դասավանդողներին տրամադրվող ռեսուրսների կիրառելիության, հասանելիության և արդյունավետության գնահատման մեխանիզմներ:

4.3.7. Բուհում առկա են մասնագիտական կրթական ծրագրերի և ընթացիկ աշխատանքի արդյունավետության վերաբերյալ տեղեկատվության հավաքագրումը, վերլուծումը և կիրառումը գնահատող մեխանիզմներ:

4.3.8. Բուհում գործում են կրթական ծրագրերի և շնորհվող որակավորումների մասին անկողմնակալ տեղեկատվության գնահատման մեխանիզմներ:

4.3.9. Որակի ներքին ապահովման համակարգը պարբերաբար վերանայվում է:

#### **4. 4. Արտաքին կապեր և միջազգայնացում**

4.4.1. Փորձի փոխանակմանը, զարգացմանը և դրանց միջազգայնացմանը նպաստող միջավայր ստեղծելու նպատակով բուհում գործում է արտաքին կապերի հաստատումը խրախուսող քաղաքականություն և ընթացակարգ:

4.4.2. Բուհի արտաքին կապերի և դրանց միջազգայնացման ապահովման ենթակառուցվածքը երաշխավորում է բնականոն գործընթաց:

4.4.3. Բուհում առկա են տեղական և օտարերկրյա հաստատությունների հետ արդյունավետ համագործակցության մեխանիզմներ:

4.4.4. Օտար լեզուների իմացության անհրաժեշտ մակարդակի ապահովման միջոցով բուհը խթանում է միջազգայնացման արդյունավետությանը:

#### **4.5. Ուսումնառողներ**

4.5.1. Բուհում գործում են ուսումնառողների ներգրավման և ընդունելության իրականացման հստակ մեխանիզմներ:

4.5.2. Ուսումնառությանը նպաստելու նպատակով բուհը լրացուցիչ խորհրդատվական հանդիպումների կազմակերպման հնարավորություններ է ստեղծում:

4.5.3 Ուսումնառողներին աջակցություն տրամադրելու նպատակով բուհում սահմանված է վարչական աշխատակազմին դիմելու ժամանակացույց:

4.5.4. Բուհում գործում են ուսումնառողների կարիերային նպաստող ծառայություններ:

4.5.5.Բուհում գործում է կառավարման գործընթացում ուսումնառողների ներգրավվածությանը նպաստող քաղաքականություն և ընթացակարգ:

4.5.6. Ուսումնառողները ներգրավված են գիտահետազոտական աշխատանքներում:

4.5.7. Ուսումնառողները ներգրավված են հաստատության գործունեության համալիր գնահատման գործընթացներում:

4.5.8. Բուհում գործում է ուսումնառողների իրավունքների պաշտպանությունն իրականացնող պատասխանատու մարմին:

4.5.9. Ուսումնառողները ներգրավված են որակի ապահովման գործընթացներում:

#### **4.6. Պրոֆեսորադասախոսական և ուսումնաօժանդակ կազմ**

4.6.1. Բուհում գործում է կրթական ծրագրերի իրականացման համար համապատասխան մասնագիտական որակներ ունեցող պրոֆեսորադասախոսական կազմի ներգրավման քաղաքականություն և ընթացակարգ:

4.6.2. Բուհի կրթական ծրագրերի համապատասխան սահմանված են պրոֆեսորադասախոսական կազմի մասնագիտական որակներին ներկայացվող պահանջները:

4.6.3. Բուհում գործում է պրոֆեսորադասախոսական կազմի պարբերական գնահատման քաղաքականություն և ընթացակարգ:

4.6.4. Պարբերաբար իրականացվող ներքին և արտաքին գնահատումների արդյունքում բացահայտված բացթողումների և անհարթությունների շտկման նպատակով բուհում անց են կացվում դասավանդողների կատարելագործմանն ուղղված միջոցառումներ:

4.6.5. Բուհում գործում է պրոֆեսորադասախոսական կազմի խրախուսման քաղաքականություն ու ընթացակարգ:

4.6.6. Բուհում առկա է ռազմավարական նպատակների իրականացման համար անհրաժեշտ վարչական և օժանդակ աշխատակազմ:

#### **4. 7. Մասնագիտական կրթական ծրագրեր**

4.7.1. Կրթական ծրագրերը մշակվում են շնորհվող որակավորումներին համապատասխան՝ ուսումնառության ակնկալվող արդյունքներով:

4.7.2. Մասնագիտական կրթական ծրագրերի իրականացման ակնկալվող արդյունքները համապատասխանում են ուսումնառողների և շահակիցների կարիքներին:

4.7.3. Մասնագիտական կրթական ծրագրերը մշտադիտարկվում են, իսկ արդյունավետությունը՝ գնահատվում:

4.7.4. Մասնագիտական կրթական ծրագրերի շրջանակներում ուսումնառողները գնահատվում են ակնկալվող արդյունքներին համապատասխան:

4. 7.5. Մասնագիտական կրթական ծրագրերը համահունչ են նմանատիպ այլ ծրագրերին և նպաստում են ուսումնառողների ու դասավանդողների շարժունության ապահովմանը:

#### **4. 8. Հետազոտություն և զարգացում**

4.8.1. Բուհն ունի հետազոտական ոլորտում սեփական հետաքրքրություններ և հավակնություններն արտահայտելու ռազմավարություն, նաև միջնաժամկետ ու կարճաժամկետ ծրագրեր:

4.8.2. Բուհն ունի կատարվող հետազոտություններին և նորարարություններին նպաստող քաղաքականություն ու ընթացակարգ:

4. 8.3. Բուհը կարևորում է հետազոտական գործունեության միջազգայնացումը:

4.8.4. Բուհում գործում են հետազոտական գործունեության և ուսումնական գործընթացի փոխկապակցող մեխանիզմներ:

4. 8.5. Բուհում իրականացվող հետազոտական գործունեության իրականացումը համապատասխանում է որակի ապահովման մեխանիզմներին:

#### **4. 9. Ենթակառուցվածք և ռեսուրսներ**

4.9.1. Բուհում ստեղծված է մասնագիտական կրթական ծրագրերի իրականացման համար անհրաժեշտ կրթական միջավայր:

4. 9.2. Բուհը ձգտում է ճիշտ բաշխել ֆինանսական ռեսուրսները՝ ապահովելու ուսումնական և հետազոտական գործընթացները նյութատեխնիկական բազայով



(սարքավորումներով, ուսումնադիդակտիկ միջոցներով, ուսումնական և տեղեկատվական գրականությամբ):

4.9.3. Բուհում տարվում է մասնագիտական կրթական ծրագրերի նպատակների իրականացումն ու շարունակականությունն ապահովող և ֆինանսական միջոցների ճիշտ բաշխման քաղաքականություն:

4.9.4. Որակի բարելավումն ու կայունությունը ապահովելու նպատակով բուհի ռեսուրսային բազան օժանդակում է մասնագիտական կրթական ծրագրերի և դրանց ռազմավարական պլանի իրականացմանը:

4.9.5. Բուհում գործում է տեղեկատվության և փաստաթղթաշրջանառության գործընթացների կառավարման քաղաքականություն և ընթացակարգ:

4.9.6. Բուհի քաղաքականության և ընթացակարգերի կառավարման գործընթացն իրականացվում է որակի ամբողջական կառավարման (Total Quality Management) սկզբունքով:

4.9.7 Առողջության և անվտանգության պահպանման ծառայությունների միջոցով բուհը բավարար միջավայր է ապահովում:

#### **4.10. Հասարակական պատասխանատվություն**

4.10.1. Բուհում գործում են հասարակայնության հետ կապերի ձևավորմանը նպաստող կայուն մեխանիզմներ:

### **5. Որակի կառավարման համակարգի փաստաթղթեր**

5.1. բուհի որակի կառավարման բնագավառում Համալսարանի առաքելությունն ու քաղաքականությունը ներկայացնող Որակի ապահովման հայեցակարգ,

5.2. որակի կառավարման համակարգի փաստաթղթերի մուտքի և ելքի գրանցման մատյան,

5.3. Համալսարանի որակի կառավարման համակարգի ներքին աուդիտի անցկացման կարգ,

5.4. Համալսարանի որակի կառավարման համակարգի ներքին աուդիտի ծրագրեր,

5.5. Համալսարանի որակի կառավարման համակարգի ներքին աուդիտի արդյունքների վերաբերյալ հաշվետվություն,


5.6. Համալսարանի որակի կառավարման համակարգի վիճակի վերաբերյալ հաշվետվություններ և վերլուծական նյութեր,


5.7. աշխատանքի տարեկան պլան,

- 5.8. Համալսարանի որակի կառավարման համակարգի նիստերի և խորհրդակցությունների արձանագրությունների մատյան,
- 5.10. կրթության որակի կառավարման հարցերով Համալսարանի անձնակազմի, ղեկավարության վերապատրաստման ծրագրեր:

Հավելված 2







Գործընթացային  
հորիզոնական  
մակարդակ